

հի հռչակեցին Յակոբ թագաւորին անհա-
րազատ դուստրը՝ Կարաւտա Լուսինեան,
ամուսնացնելով զնա՝ Նապոլիի փերդինանդ
Ա թագաւորի որդւոյն՝ Ալփոնսոսի հետ, ու-
րուն Փալլիւիոյ իշխանի տիւղոսը տուին:

Թուի թէ նոյն իսկ սպանալեօք բռնա-
դատեցին զթագուհին՝ որ յետս կողէ կերի-
նայի զղեկին հրամանատարը, որ Կատարի-
նէի հաւատարիմ անձինքնեղն մին էր. և
այս առթիւ էր, որ ապստամբը յափշտակե-
ցին թագուհւոյն զոհարնեը և աղամանդնե-
րը, ոսկի և արծաթ անթմեքը, և կը յա-
ւելու Մալիպիւրոյ, նաեւ վաթսուէ հազար
դուկատ, առանց կարեկցելու անոր աւազելի
վիճակին վրայ: Եւ այսպէս, Կատարինէ միայն
« ծուխ և արտաքին երեւոյթն » ունէր թա-
գաւորութեան¹, իսկ իրեն շուրջը՝ խորշախ և
նենգաւոր անձինք՝ որք կը դարանէին ան-
դուզ իրեն կենաց և իշխանութեան: Նոյն
իսկ Նիկոսիոյ արքեպիսկոպոսն, զոր Յակոբ
Բ բարձրացուցեր էր պղ աստիճանին,
թշնամի էր թագուհւոյն և կուսակից փեր-
դինանդ թագաւորին: Իրաւ է, թէ շատք կը
սիրէին զինքը, բայց երկնորք էին:

Թէ և երկրորդ անգամ մի եւս վենետկոյ
նաւատորմիդն զնաց ի Ֆամագուստա, ան-
միշտպէս յետ ապստամբութեան, որպէս զի
արգելու (ինչպէս կը գրէր ծերակոյտն առ
Մոչենիզոյ ի 20 զեկտեմբերի), որ դարձեալ
չի կրկնուի. սակայն չկայր այլ եւս Անդր-
կոռնարոյ՝ որ հսկեր թագուհւոյն կենաց վը-
րայ, և Մոչենիզոյ չէր կարող խզել բոլո-
րովին վենետիկեաց զէմ՝ եղած դաւակցու-
թեան թիւերը, որուն մասնակից կին՝ ինչ-
պէս ըսինք՝ Նիկոսիոյ արքեպիսկոպոսն, Բից-
ցոյ Մարին, Լուզուիկ Ալբերիդ, զունգասապն
Կարկերան Սուարէզ, Ստալազա և այլք, և
զիսաւորապէս Նապոլիի արքունիքն՝ որ զըր-
դիչն էր ամենայն թշնամութեանց: Ուրիշ ան-
գամ՝ դարձեալ Բիցցոյ նոր դաւադրութիւն
մի կազմած ըլլալով, այսինքն է՝ Ալփոնսոսի

հետ Կիպրոսի ծովափը ելնել և տիրել թա-
գաւորութեան, իմացաւ զայն Տասանց Ա-
տեանն, և հրամայեց (1476 Յուլիս 9) Լո-
րեզան ծովակալին՝ որ փութայ ի Կիպրոս:
Նա ապստամբաց զիսաւորներէն ութը ձեր-
բակալեց և ցոկանաւորու մէջ դրած վենե-
տիկ ուղարկեց, ինչպէս նաեւ Յակոբ եր-
կրորդին անհարազատ որդիքը: Այս ամենայն
աղետից վրայ աւելցաւ մեծագոյն մ'ալ, որ
բոլորովին ընկճեց թագուհւոյն սիրտը. մեռաւ
որդին, հազիւ մէկ տարեկան, իւր մէկ հա-
տիկ յոյսն և գորովանաց առարկայն:

1. ՅՈՎՀ. ԹՈՐՈՍԵԱՆ

Շարայաբելի



ՊՍԱԿ ՄԸ

ՓՐԻԴՐԻԽ ՄԻԻԼԼԵՐԻ

ԳԵՐԵՉՄԱՆԻՆ ՎՐԱՅ

(Շար. տես էջ 481)



ԹՈՒՂԹ Ա.

Դեղաբան

Կ. Յ. Պառամանեան

310, Սկիւտար, Սէլամաք:

Մեծամուծ Գիամակամ.

*Zeitschrift für die Kunde des Mor-
genlandes* պատուական թերթին մէջ Ձեր
գրած մի յօդուածն՝ Հայ նշանագրաց մա-
սիւն, Թարգմանաբար հրատարակուած էր և
« յԱմսորեայ Հանդէսն » վիեննայի:

questi se contenterà de dar fumo e dimostrazione a
la Maestà de la Regina et loro manizare tuto
questo regno et ogni sua facultà come li pia-
cerà ». (Att. Contelli, Caterina Cornaro, etc.
էջ 76):

1. Ինչպէս կը գրէր վիկար Սուրանցոյ ի
Ֆամագուստայէ առ զուրան, իւր 1473 ղեկա-
ւոր թուականաւ Բզթոյն մէջ. « Da un canto,
par differenti, et stare tuli su l'armi, per ri-
spetto l'uno del'altro, se zurano fede, vedo

Ձեր այդ յօդուածն տեղեկացայ՝ թէ նոյն խնդրոյն առթիւ դուք եւս ինչ նման կը հետեւիք Ասողկայ պատմութեան (Բ, 6)։

Ինչպէս կը գրէք, « Հայոց նախմտորպեան նշանագիրն սեմական գրուած ունէր » թէև, բայց միւս կողմէ տեսնելով հայ, և նոյն իսկ յոյն նշանագրաց՝ Բակարիացոց և կամ հին Պարսից սեպագրոց հետ ունեցած քիչ թէ շատ նմանութիւնը, տարակուսանաց մէջ կը մտամ։

Ահաւասիկ ըրած բաղդատութիւնս։

𐎶𐎶𐎶 = 𐎶𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶 = 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶

𐎶𐎶, 𐎶𐎶 = 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶

𐎶𐎶 = (𐎶) 𐎶, 𐎶 = 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶

𐎶𐎶 = 𐎶, 𐎶, 𐎶 = 𐎶. 𐎶, 𐎶, 𐎶

Թ Ո Ւ Ղ Թ Բ. I

ՄԻԻԼԼԵՐ ՊԱՏԱՄԻԱՆԵ Ա ՊԳՌՈՅ

մեծապատիւ տէր !

ընկալայ զպատուական նամակն ձեր գր. յ5/17 մայրոսի եւ մեծաւ խնդութեամբ տեսի զպարագլուսն ձեր յուսումնասիրական գործս եւրովպացի գիտնականաց, որ մեծ պատիւ է մերոյին փոքութեան և ձերոյին գերա-ծնութեան։

Վասն համարման ձեր յաղագս աղբիւր հայկական նշանագրոց պարտ է ինչ խոստանալ զի բեւեռական նշանագիրք հին պարսից յետ ասպատակի եւ աւերման աշխարհի ի ձեռն աղեկանդորոսի մակեդոնացոյ ի սպառ կորուսեալ են եւ պարսիկք ինքեանք ի սասանական տէրութեան զատորական նշանագիրս ի զործ ածելին։ Վասն որոյ ոչ կարեմ իմանալ յուստի դանիել ասորի եւ մեարութ զբեւեռական օրինակս հայ նշանագրոց առեալ իցեն։

յարգանքօք ողջունելով զգերածնութիւն ձեր եւ զձեռն ճմլելով² մտամ

ձեր իս. ծ.

ՓԻՌԻՐԻՆ ՄԻԼԼԵՐԵԱՆ

սասանական եւ սասանացի
ի հեմարանի գիտութեանց

Վրեմայ 22. յունիսի.

D.r F. Müller III, Marxergasse 24, a. WIEN.

1. Այս թուղթը կ. Պարսի « Արեւիք » օրագրին մէջ հրատարակած է սիրուն խորհրդածութեամբ մը՝ նշանաւոր գրագէտ և իմաստասէր « Մելանիա »։

2. Գերմաներէն « սեղմել զձեռն » չեն ըսեր, այլ die Hand drücken = « զձեռն ծմլել »։ որ սեղմել է մաստով ալ կը գործածուի հոս։

Թ Ո Ւ Ղ Թ Գ .

Կ Բ Կ Ի Ն Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն

Մեծանուն և հանճարաշատ Արեւելագիտի, Տեառն իմում Փրփրիկայ Միլլերեան, ակնածական յարգանք և ամենայն խոնարհութեամբ սղջոյն :

Թէ քանի՞ թերկրապատար խնդութեամբ և երախտազէտ շնորհակալեօք լցոյց զմեզ թուղթդ սիրագեղ, գրեալ առ մեր նուաժութիւն, զայդ անմարթ է ինչ ընդ գրով սահմանի գրաւել. այնու զի այր ոք մեծանուն և աշխարհահռչակ՝ յուսմունս Արեւելեան լեզուաց, սրպիւր ոք Ձերդ բարձրութիւն է, զիջանի անարգամեծար խոնարհութեամբ պատասխանի առնել իմում փանաքի գրութեան. և այսքանեալ եւ ոչ շատացեալ՝ իբրեւ ընդ հաւասարի ումեմ՝ եղբայրաբար և սիրալիր բանիք լինի ընդ իմում նուաժութեան խօսակից։ Ահա այդով շնորհի՜ աւսեմ չմարթի ինչ բանի լսիով լինել երախտահարացց. այլ՝ ի սրտիս տախտակի անշիջ արձանագրեալ պահեցից՝ ցորչալ զօդ կենաց շնչեմ՝ զանուն չնաշխարհիկ Տեառնդ, որ սիրելին է ինչ, և լինիցի յաւետ՝ հանդոյն կենաց իմաց։

Այլ՝ միթէ իցէ՞ ինչ, եթէ զիտողութիւն մի յառաջ բերիցեմ ի վերայ հատածի իրիք պատուական թղթոյդ, յորում յետ աշխարհակալութեանն Աղբջանցիքի, ասեք, ի սպառ կորեան բեւեռական նշանագիրք Պարսից. ապա ուրեմն՝ որնով նշանագրողք արդեւք գրեցան բեւեռական արձանագիրք Բեհիստունի և Պերսեպոլսոյ և այլոցն, զորոց և՛ զբեւեռագիրն, և՛ զընթերցումն, և՛ զթարգմանութիւնն միանգամայն տեսեալ է իմ։

Արդ, եթէ այդ բեւեռագիր արձանագրութիւնք ի միջի կան, որպէս կարծեմս, հանձնիք մարդասիրաբար և զայս հետաքրքրութիւն իմ՝ յարգեցուցանել, և ընդունել կանխաւ զանկիղծ հաւաստիս խորին և ակնածու յարգանացս, որով մնամ միշտ մարդասէր Տեառնդ անձնանուր՝ խոնարհ ծառայ

ԿԱՐԱՊԵՏ Յ. ՊԱՄՍՏԻԱՆ

Թ Ո Ւ Ղ Թ Գ .

ՊԱՏԵՍԻԱՆԵՒ ՄԻԻԼԼԵՐ Գ. ԹՂԹՈՅՆ

մեծապատիւ տէր !

ընկալայ զպատուական և սիրալիր նամակն ձեր, գրեալ յի՞՛ նաւասարդի և ընթերցայ զնա բերկրալի խնդութեամբ. ահաւասիկ պարապեալ շտապիմ պատասխանել զհարցումեդ վասն բեւեռաձեւ նշանագրութեան հին Պարսից։

արձանագիրք Բեհիստունի և Պերսեպոլսոյ կանգնեալ են ի թագաւորաց ախեմենեան սերնդեան, որ տեսեաց 559—334 յ. Ք. Ք. ապա դուք գիտէք, զի թագաւորութիւնն ախեմենեան սերնդեան ամայեալ եւ աւարտեալ է յԱլեկսանդրէ մակեդոնացոյ, զոր պայազատեան նախ սեղեկոսեանք, ապա արշակունիք եւ յետ սասանեանք. յաւորար որոց նշանագիրք հայոց նիթեալ են. վասն զի գիտեմք թէ սեղեկոսեանք յունական գրով և արշակունիք եւ սասանեանք ասորի գրով վարեցին, անհնարին երեւի նիթումն նշանագրութեան հայոց ի բեւեռաձեւ նշանագրութեանն, քանզի գիտութիւն բեւեռաձեւ նշանագրութեան հետ 700 ամաց հաւաստեալ ի սպառ կորնչեալ էր։

ողջ լերուք մեծապատիւ տէր եւ սիրելի բարեկամ. ակնածու յարգանք մնամ ձերոյին գերազնուութեան

խոնարհ ծառայ

Փ. ՄԻԻԼԼԵՐ .

Թ Ո Ւ Ղ Թ Ե .

Խ Ն Գ Ի Ր Մ Ի Ի Լ Լ Ե Ր Ի

մեծապատիւ ըստեկամ !

ի վաղ ժամանակաց ի խղիւր լինիմ գրոցն հռչակաւորից որք կոչին «գիրք պատմութեան

4. Կ'երկայ թէ ինքեանս՝ իմ է կարգացեր :

կայսերն փոնցիանոսի և կնոջն և ո(բ)զույն
Դիոկղետիանոսի և յեօթանց իմաստասիրաց»
եւ բազում անգամ յուզելով ոչ կարելի զնոսա
ընդունիլ. հուսկ յետոյ ապաւինիմ ի բարե-
կամական բարութիւն ձերոյն գերազնու-
թեան աղերսելով թէ մարթից զայն զերս
ի քաղաքի ձեր է. պոլիս գտանիլ.

Հնորհակալութիւն յաշտեանական փոքր-
կութեան իմոյ յառաջ ազդելով ակնածու եւ
բարեկամական ողջունիւ մնամ ձերոյն գե-
րազնուութեան խոնարհ ծարայ

ՔՐԻՍՏԻՆՈՍ ՄԻԻԼԼԵՐԵԱՆ

Թ Ո Ւ Ղ Թ Զ.

ԱՌԱՔՈՒՄՆ ԳՐՈՅՆ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԻ Կ ԵՒ Ե ԹՂԹՈՑ

Մեծապատիւ Ուսումնապետից, Տեառն
Փրեզերիկոսի Միւլլերեան, հոգեկցորդ բարե-
կամի իմում խնդայ:

Մեծա բերկրութեամբ լցաւ սիրտ իմ յըն-
դունել անգ իմում՝ զերկոսին վերջինս սի-
րադիմ նամակաց Ձերոց. զի առաջնովն զհե-
տախոյզ հոգւոյ իմոյ պարարէիք զիդնս, և
հուսկ յետնովն պատհնս իմն բարեպատհնս
ընծայէիք ինձ՝ սպառ զուզնաքեաց հարկանիս
Չերուով մեծութեան, առաքելով առ Ձեզ ի
մատենադարանէ աստի իմմէ զմատենիկն՝
որում ի վաղ ժամանակաց հետէ, սոսէիք,
լինել ի խնդիր, և զորոյ ամօք յառաջ լցեալ
էի ձեռագրով զլեւերի իլիցն:

Արդ, մեծապատիւ Տէր և սիրելի Բարե-
կամ, ընկալարուք ընդ այդմ չնչին առհա-
ւատչիկ անսահման սիրոյս՝ և՛ զխորին ակ-
նածախսաւն մեծարանս, որով մնամ միշտ
Տեառնդ իմում անձակաբօտ՝ խոնարհ ծառայ

Կ. Յ. ՊԱՍՄԱՃԱՆ

1. Այս զրոց առթիւ Միւլլերի տուած աե-
ղեկութիւններն յիշեցինք արդէն Կիւնսագրա-
կան ակնարկիս մէջ (յէջն 485). իսկ այստեղ
նոյնութեամբ ի մէջ կը բերեմ այն տողերը
միայն՝ զորս զգած է յիշեալ զրոց բանասի-
րական արժէքը ցոյց տալու համար. — «Գիրքս
շատ սակաւագիւտ է և Եւրոպայի հրապա-
րական զրատանց շատ քիչը պիտի ունե-
նան: Շատ ասարի զուր փնտռեցի այս գիրքը,
մինչև որ քիչ ժամանակ յառաջ միջնորդու-

Թ Ո Ւ Ղ Թ Է.

ՊԱՏԱՍԻԱՆԵ ՄԻԻԼԼԵՐ Զ ԹՂԹՈՑՆ

Մեծապատիւ եւ սիրելի բարեկամ!

Մեծա բերկրութեամբ ընկալայ զպա-
տուական նամակն ձերոյն գերազնուութեան
եւ սիրտ իմ լցաւ խնդութեամբ եւ ուրախու-
թեամբ հայելով զմատենիկ զոր ոչ երբէք
տեսանել յուսացայ. ընկալարուք պատուա-
կան եւ սիրելի բարեկամ զգոհութիւն եւ շնոր-
հակալութիւնս մերոյն փոքրկութեան վասն
այդ մեծազին ընծայի, զոր գրութեամբ բա-
րեկամական ձեռին զարգարեալ ի գրանցի
իմ որպէս զանձ զգուշութեամբ պահեցիք.
տացէ ինձ աստուած զի զայդ մեծ սպասա-
ւորութիւն ձերոյն բարեկամութեան հատու-
ցանել կարացիք!

ողջ լերուք մեծապատիւ Տէր եւ սիրելի
բարեկամ եւ ընկալարուք զսիրախաւն եւ ակն-
ածու մեծարանս, որով մնամ ձերոյն գեր-
ազնուութեան խոնարհ ծառայ

Փ. ՄԻԻԼԼԵՐԵԱՆ¹

Թ Ո Ւ Ղ Թ Բ. 2

ԱՌԹԻԻ ՀԱՆՈՒԵԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Մեծապատիւ Տէր և սիրելի Բարեկամ.

Յընթեռնուլ անգ իմում ի վերջին թուի
«Ամսօրեայ Հանդիսի» զթարգմանութիւն
Ներածութեան հատուածոցն, զոր երբեմն
մասն առ մասն հրատարակեալ էր յաւեր-

թեամբ իմ մեծարդոյ բարեկամիս՝ Տր. Կ. Պաս-
մաճեանի որ ի Սկիւտար՝ մատենադրական այդ
հազուադիւտ դանձր ձեռք ձգեցի: և Հատուածս՝
որ հրատարակուած է նոյն վիճինայի Արեւ-
լազիտական ուսումնաթիւթի մէջ, համառու-
տեալ թարգմանուած է ի Հանդ. ամս. (1894,
յէջն 37), ձեռամբ վեր. Հ. Յակոբբուս վ. Տաշեան:
2. Ը. Թուղթի կորսուեցաւ:

3. Գ տարի, 1890 էջ 41, Թրգմ. ի Հ. Յ.
վ. Տաշեան:

ժական յիշատակաց արժանին ողբացեալ հայերէնագէտն Յովհաննէս Հանուշ՝ յ«Արեւելագիտական թերթին Վիեննայ», և զոր ապա զնոյն ի մի վայր հաւաքեալ Զեք առանձինն տեսարակաւ և հմտական իմն Յառաջբանիւ պատկեալ՝ վերադին ի լոյս ածեալ էր. իդձ մեծի տեսնանաց զոր առ սիրելու թին Զեք տածէի՝ վառեալ անդէն բորբոքեցաւ յիս, և զի փափագէի օգուտ քաղել յամենայն՝ որ կարիցէ ճարակ ինչ մատուցանել այլմ՝ քրքազան հրոյ սիրոյս՝ պատճառս առի յընթերցողածոց անտի թարգմանութեանն ի վեր անդր յիշատակելոյ, գրել զթուղթս առ և եւս արժարծելոյ զնոյն հոյր աստուածաբանոց սիրոյ ի սեղան արժիցս երկոցունց. և զի մի գանձին եւեթ զհաճոյս խնդրել երեւիցիմ զմեծագին ժամանակի Զեքոյ վայրեանս յընթերցումն իմից տողիցս վասնեալ, առաքեցի ընդ թղթոյս զայն թիւ «Մասին» լրագրոյ, յորում հրատարակեալ էր յօդուած մի առ յինն գրեալ՝ ունեցիմ բանս ինչ յայն պիտի իմն գաւառաբարբառ, զորմէ գուն ուրեց լեալ են բանք ի հրապարակագիրս ազգիս, կամեցեալ այսու նորագոյն իմն ճարակ մատուցանել հետախոյզ մասց իմաստուն բանասիրիդ¹.

Ձայս եւս արժան համարիմ յայտ առնել աստանօր զի և յոստանին աստ է. Պոլսոյ ռամիկըն ըստ օրինակի գաւառաբարբառոյն արեւելեայց՝ զմիջին տառոյ — բ, գ, դ, ձ, ջ — ճշգրտիւ արտաբերեն, բայց զնորբս՝ ոչ նորբ. ըստ օրինակիդ, բակ, գատատառն, գիտեմ, ձի, շոտ բառոց հնչին *bag, das, daz, didem, dzi, dzur*։ Դարձեալն եւեթ ի պարութիւնս հնչեն *pag, tadasdan, kadem, ci, zur*.

Մաղթելով Գերագնութեանդ ողջամբ և բարեկենդանութեամբ կեալ ընդ երկայն աւուրս, և զանկեղծաւոր յարգանաց ընծայելով Զեզ զհաւաստիս, մեամ՝ խոնարհ ծառայ

Թ Ո Ւ Ղ Թ Ժ .

Ե Ո Ր Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ե

Առ մեծարգոյ վարդապետ Փրփրիստո Միւլլերեան ինչպոյ.

Յաւուրսո յայտնիկ ոմն ի բարեկամաց յայտնէ կարծիս ի միում ի տեղական թերթից՝ թէ լեզուիս Հայոց սկիզբն առեալ է ի տուրանեանէ, և ոչ ի հնդեւրոպականէ. և առ յապացուցանել զայս յաւելու ասել թէ Հայոց՝ սահմանակից գոլով վրաց և Աղուանից և այլոց հիսթիական ազգաց տուրանեանց, լեզու նոցա զգեցեալ է առ յապաշտ մարմին հնդեւրոպական՝ ի տուրանեան կմայես, և թէ զայդ մարմին փոխ առեալ է հայ լեզուին՝ յարեւելեան (Պարսիկ) և յարեւմտեան (Յոյն) դրացեաց իւրոց, որպէս զգեցեալ է զարդիս արիական—սմանական (Պարսիկ և Արաբ) մարմին՝ ծանօթ թուրքաբէնն, որ, որպէս յայտ է, ունի ծագումն տուրանեան ։ Կմայես այս ակն յաղհմոն երեւի, ասէ, յորմամբ բաղդատեմք զբայս լեզուիս ընդ թուրքաբէնին. այսպէս՝ գտանէ նմանութիւն մեծ ի ծամանակս բայից, և թէ հակառ բայն մեր՝ է պակասաւոր որպէս և թուրքաբէնն, այն է ունի ներկայ, անկատար և օտորադասական եւեթ, զոր օրինակ՝ եմ = բէլ, էի = բւէլ, իցեմ = բււէլ. իսկ զմեւ ծամանակին տունու ի բայն լիւնիւ կամ եւ զանիւմ = ٩٤١ : ի մերումն՝ որպէս և ի թուրքաբէնին՝ պակասէ սեռ (*genre*) :

Այսոքիկ են փաստք զորս ի հանդէս ածէ բարեկամ մեր :

Արդ ինչորեմ յաղնուութենէ Զերմէ զի հաճեալից ընդ հուպ հաղորդել ինձ զկարծիս Զեր զայսմանէ, և երախտապարտ կցողցանել

ԶՁերդ
Խ. Ժ.

Կ. Ց. ՊԱՍՏՄԱՆԻԱՆ

Կ. Ց. ՊԱՍՏՄԱՆԻԱՆ

1. « Ինչուսի կեանքէն յիշատակ մը » վիպախառն յօդուածս է նա, հրատարակեալ ի Մասիս շաբաթաթերթի, 1890 (թ) :

2. Մաղիկ մանկանց շաբաթաթերթ, թիւ 4, 2, և, և այլն, 1891 տարւոյ նոր շրջանի :

Թ ՈՒՂԹ ԺԱ.

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԻՒԼԼԵՐ Ժ ԹՂԹՈՅՆ

Մեծարգոյ տէր եւ սիրելի բարեկամ !

Խնդուածամբ մեծաւ ընկալայ զպատուական նամակն ձեր եւ ճեպիմ զհարցումն վասն կարծեաց ձերոյին բարեկամին պատասխանել.

Հայկական լեզուն հաւատարմութիւն հրնդու եւրոպական լեզուաց համարելի է, վասն զի քերականութիւն նորին բոլորովին զտպաւորութիւն այնց լեզուաց երեւեցուցանէ. եւ ապա այնք բայց Հայկական լեզուիս որք ոչ փոխառեալք այլ բնիկք են որոշ ձայնական օրինոց կերպարանեալ են զի անհնար է զնոսա փոխառեալս իմանալ. Եւ վեր քան զամենայն — եթէ զհայկական լեզուն Թուրքաց լեզուաւ համեմատեմք պարտեմք ոչ զնորասանդ օսմանական լեզու այլ զհնագոյն լեզու Ոյգուրաց եւ Յակուիաց 'ի կիր արկանել եւ այնով աղազաւ երեւեսցի զի բազում այս օրինակի համեմատութիւնք զիպուածականքն ոչ ստոյգք են.

Յուշալով թէ ձերոյին գերազնուութիւն ողջ է եւ ըղձարով թէ բարեսաց տուիչ եւ ապա ձեզ զառողջութիւն ընձայեսցէ — հագում բարեկամապէս զձեռն ձեր ճըմելելով նեամ.

ձեր խոնարհ ծառայ
Փ. ՄԻՒԼԼԵՐ.

Թ ՈՒՂԹ ԺԱ.

ԳՐԳԻՆ, ՀԱՐՑՈՒՄԵ ԱՅ ՄԻՒԼԼԵՐ

Մեծապատիւ բարեկամի իմում, Տեառն Փրկիչի Միւլերի, ողջոյն եւ սէր:

Ոչ սակաւ ժամանակ է յորմէ հեռէ դաւարեալ է մեր առնել թղթագրութիւն ընդ միմեանս, եւ ընդ այս ցաւէր ինձ. Խնդրեի առիթ զիպող, եւ այն ահա յաւուրս այսոսիկ մատուցաւ. զհարցմանն են քանք իմ որ ի «Մասիս» հանդիսի, ի թիւ 16-րորտ տուր

Յունուարի այսր ամի, եւ զոր յեղումք աստ ի բարբառ գրոց՝ առաջի առնել Ձեզ.

«Իցէ՛ եղեալ արարեալ ժամանակ յորում խօսէր զբարբար լեզու. եւ եթէ այնպէս իցէ, երբ եւ յոր գաւառս: Խոտիք այնչափ միայն էր ընդ խօսեալն զբարբար եւ ընդ գրեալն որչափ այժմ ընդ աշխարհաբարն գրեալ եւ ընդ խօսեալն»:

Հանդէսն այն զհարցմանսդ տաղի արկեալ հմտից բանասիրութեան եւ պատմութեան՝ խնդրեւ պատասխանի առնել, եւ այս վասն վիճիւն այն ինչ վերադիւն յուզելոյ ընդ ջատագովս հնոյն զբարբարի եւ ընդ որս նորոյն պաշտպան կան:

Ոմանք ի մերոց բանասիրաց արարին պատասխանի, որպէս եւ յակնաւորաց եւրոպացւոց Մաքս Միւլլեր եւ Կոնիքեր: Ապա եւ մեք խնդրեմք ի Ձէնջ, որպէս ի հմտագունէ յայսպիսի խնդրս, յայտնել զկարծիս Ձեր:

Խնդութիւն մեծ եղեալ է ինձ յընթեհնոյ զլիւրդմ Ձեր զառաջինս, եւ մեծադոյն եւս եղիցի զայս նուազ առ կարօտոյ իմում յակնարկանելոյ բանս ինչ անդրէն տողեալս ի Ձէնջ: Մնամ միշտ մեծապատուութեանդ Ձերում ականածութեամբ եւ անձնազիր սիրով

խոնարհ ծառայ

ԳՐԱԳՅՈՍ ԵՍ. ՊԱՍՄԱՅԱՆ

(Ի Պարսն Հաստատուելն ետքը, առաքեցի վարդմի բարեկամին՝ վերջին հրատարակած աշխատութիւններէս, որոց մասին հէզ բարեկամս հետեւեալ տողերը գրած է վերջին անգամն ըլլալով, թղթաբարտի մը վրայ):

Թ ՈՒՂԹ Ժ Գ.

Պատուական փէր եւ սիրելի բարեկամ !

Մեծաւ շնորհակալութեամբ վասն առաջելոյ զերկու տետրակս ողջունէ զձեզ

Փ. ՄԻՒԼԼԵՐ